ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ՄԻՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԾԻՔ-ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տեղական ինքնակառավարման ոլորտի վրա իրվական ակտի նախագծի ազդեցության վերաբերյալ

«Հայաստանի համայնքների միության» Հանրապետական խորհրդի 2020թ. հունվարի 11-ի նիստում

Իրավական ակտի նախագծի անունը

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԲԱԺԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը երկրորդ ընթերցմամբ և ամբողջությամբ արդեն իսկ ընդունվել է ՀՀ Ազգային Ժողովի կողմից 13.12.2019 թվականին և ստորագրվել է ՀՀ նախագահի կողմից՝ 26.12.2019թվականին:

Օրենքով նախատեսվում է հստակեցնել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով ՀՀ համայնքների վարչական սահմաններում ընդգրկված՝ նախկինում համայնքների վարչական սահմաններից

դուրս, մարզերի վարչական սահմաններում գտնվող՝ պետական սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության եւ կառուցապատման իրավունքով տրամադրման գործընթացի հետ կապված հարցերը, մասնավորապես՝ սահմանելով, որ համայնքների վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողերը համայնքների ղեկավարների կողմից օտարվում, ինչպես նաեւ անհատույց (մշտական) օգտագործման, վարձակալության եւ կառուցապատման իրավունքով տրամադրվում են Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով (տվյալ իրավասությունը համայնքներին տրված էր 10 տարով, իսկ ընդունված օրենքով նախատեսվում է համայնքների համար այն ամրագրել անժամկետ):

Հիմնական եզրակացություն

<u>Առաջարկվող մոտեցումը կհստակեցնի տվյալ հարցում համայնքների իրավասությունները, մասնավորապես՝ անկախ այն հանգամանքից, թե հողը համարվում է համայնքային սեփականության թե պետական սեփականության, դրա նկատմամբ օգտագործման և տնօրինման իրավունքը վերապահվում է համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններին, մի բացառությամբ՝ որ պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարման գործընթացի իրականացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Իրավակիրառական իմաստով օրենքի կարգավորումները կարելի է գնահատել դրական և եզրահանգել, որ օրենքի կիրարկումից չեն առաջանալու բացասական իրավական հետևանքներ:</u>